ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիսի 2021 թվականի N 528-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մեսրոպ Գալուստի Խուլյանին տալ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան, ամառային խոհանոցի և լողավազանի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 35 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Մեսրոպ Գալուստի Խուլյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մեսրոպ Գալուստի Խուլյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիսի 2021 թվականի N 527-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.«Այանիս» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արթուր Բորիսի Ուզունյան, տալ երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 20-րդ փողոցի թիվ 1/2 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել «Այանիս» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արթուր Բորիսի Ուզունյան, շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «Այանիս» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արթուր Բորիսի Ուզունյան, որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիսի 2021 թվականի N 526-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել Ջրվեժի համայնքապետարանին՝ իրականացնելու Ջրվեժ համայնքի ճանապարհների ասֆալտապատման շինարարական աշխատանքները, համաձայն «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/17» գնման պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 21
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հուլիսի 2021 թվականի N 525-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արամ Սոսիկի Բաղալյանին տալ քարե պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 40-րդ փողոցի թիվ 9 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Արամ Սոսիկի Բաղալյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արամ Սոսիկի Բաղալյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2021 թվականի N 524-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել Ջրվեժի համայնքապետարանին՝ իրականացնելու Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի մանկապարտեզի ջրահեռացման համակարգի կապիտալ վերանորոգման շինարարական աշխատանքները, համաձայն «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-21/15» գնման պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 20
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2021 թվականի N 523-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Ժագ Աբրահամի Գորգիսին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 51-րդ փողոցի թիվ 22 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ թվով երեք երկհարկանի բնակելի տների կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ժագ Աբրահամի Գորգիսին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 20
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2021 թվականի N 522-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Էլեոնորա Արայի Գրիգորյանի (ծնված՝ 2001 թվականի հունվարի 8-ին), Բաբկեն Գուրգենի Մայանցի (ծնված՝ 1990 թվականի սեպտեմբերի 9-ին), Արարատ Վարդևանի Արզումանյանի (ծնված՝ 1978 թվականի օգոստոսի 24-ին), Թամարա Սամվելի Չատյանի (ծնված՝ 1989 թվականի օգոստոսի 22-ին), Լարիսա Վարդևանի Արզումանյանի (ծնված՝ 1977 թվականի հունիսի 5-ին), Արմեն Յուրիի Գրիգորյանը (ծնված՝ 1973 թվականի սեպտեմբերի 9-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված 2021 թվականի հուլիսի 16-ի դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Շինարարների փողոցի թիվ 14 հասցեի բնակելի տանը բացված ինքնակամ երկու պատուհանները և դուռը, ինչպես նաև բնակելի տունը բաժանելու վեց առանձին մասերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24052021-07-0057, տրված 2021 թվականի մայիսի 24-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի հուլիսի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էլեոնորա Արայի Գրիգորյանին, Բաբկեն Գուրգենի Մայանցին, Արարատ Վարդևանի Արզումանյանին, Թամարա Սամվելի Չատյանին, Լարիսա Վարդևանի Արզումանյանին, Արմեն Յուրիի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Շինարարների փողոցի թիվ 14 հասցեի տնամերձ հողամասում 2021 թվականին ինքնակամ բացվել է թվով 2 պատուհան և 1 դուռ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50 և 53-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Էլեոնորա Արայի Գրիգորյանին, Բաբկեն Գուրգենի Մայանցին, Արարատ Վարդեվանի Արզումանյանին, Թամարա Սամվելի Չատյանին, Լարիսա Վարդեվանի Արզումանյանին, Արմեն Յուրիի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Շինարարների փողոցի թիվ 14 հասցեի բնակելի տանը ինքնակամ բացված 2 պատուհանը և 1 դուռը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, բացվածքները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Էլեոնորա Արայի Գրիգորյանին, Բաբկեն Գուրգենի Մայանցին, Արարատ Վարդևանի Արզումանյանին, Թամարա Սամվելի Չատյանին, Լարիսա Վարդևանի Արզումանյանին, Արմեն Յուրիի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Շինարարների փողոցի թիվ 14 հասցեի բնակելի տանը ինքնակամ բացված 2 պատուհանը և ինքնակամ բացված 1 դուռը, համարել օրինական:

2.Էլեոնորա Արայի Գրիգորյանին, Բաբկեն Գուրգենի Մայանցին, Արարատ Վարդևանի Արզումանյանին, Թամարա Սամվելի Չատյանին, Լարիսա Վարդևանի Արզումանյանին, Արմեն Յուրիի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Շինարարների փողոցի 14 հասցեի թիվ 1՝ 173,42 քառ.մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Շինարարների փողոց, թիվ 14/1 բնակելի տուն, թիվ 2՝ 63,53 քառ.մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Շինարարների փողոց, թիվ 14/2 բնակելի տուն, թիվ 3՝ 84,41 քառ.մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Շինարարների փողոց, թիվ 14/3 բնակելի տուն, թիվ 4՝ 60,41 քառ.մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Շինարարների փողոց, թիվ 14/4, թիվ 5՝ 81,89 քառ.մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Շինարարների փողոց, թիվ 14/5 և թիվ 6՝ 168,83 քառ.մետր մակերեսով բնակելի տանը տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Շինարարների փողոց, թիվ 14/6 բնակելի տուն:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 6 948 (վեց հազար ինը հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Գրիգոր Սերոբյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Էլեոնորա Արայի Գրիգորյանին, Բաբկեն Գուրգենի Մայանցին, Արարատ Վարդևանի Արզումանյանին, Թամարա Սամվելի Չատյանին, Լարիսա Վարդևանի Արզումանյանին և Արմեն Յուրիի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 20
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2021 թվականի N 521-Ա

ԳՐԵՏԱ ԱՐՄԵՆԱԿԻ ՊԱՐԽՈՄԵՆԿՈՅԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ փակուղու թիվ 15 տան բնակիչ Գրետա Արմենակի Պարխոմենկոյի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 4 անձից, ինքը և ամուսինը՝ Արթուր Միխաիլի Պարխոմենկոն չեն աշխատում, խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները, ընդ որում՝ Արթուր Միխաիլի Պարխոմենկոն ունի առողջական խնդիրներ, ներկայումս գտնվում է ստացիոնար բուժման մեջ և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Գրետա Արմենակի Պարխոմենկոն դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ Գրետա Արմենակի Պարխոմենկոյի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գրետա Արմենակի Պարխոմենկոյին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հուլիսի 2021 թվականի N 520-Ա

ԿԼԱՐԱ ԱՂԱՍՈՒ ՀՈՂՄՐՑՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 19 տան բնակիչ Կլարա Աղասու Հողմրցյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է մեկ անձից, ինքը միայնակ թոշակառու է և չի աշխատում, սոցիալական վիճակից ելնելով դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Կլարա Աղասու Հողմրցյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Կլարա Աղասու Հողմրցյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հուլիսի 2021 թվականի N 519-Ա

ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱԶԱՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱԶԱՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Գայանե Վարդազարի Բեգլարյանին և Վլադիմիր Վարդազարի Բեգլարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0352-0017 կադաստրային համարի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասում թույլատրել քանդելու անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 21042021-07-0118 վկայականում նշված 5,5 քառ.մետր մակերեսով թիվ 1 պոմպակայանը, 623,6 քառ.մետր մակերեսով թիվ 3 քարամշակման արտադրամասը, 36,0 քառ.մետր մակերեսով թիվ 4 ջրավազանը, 186,6 քառ.մետր մակերեսով թիվ 5 արտադրամասը և 6,0 քառ.մետր մակերեսով թիվ 6 պոմպակայանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գայանե Վարդազարի Բեգլարյանին և Վլադիմիր Վարդազարի Բեգլարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 19
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հուլիսի 2021 թվականի N 518-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով և երկրորդ մասով, ***որոշում եմ.***

1.Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու, ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար ստորև նշված աշխատակիցներին և համայնքային ծառայողներին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ հետևյալ չափերով.

Պետրոսյան	Ռոբերտ - համայնքի ղեկավար	300 000 դրամ
Սանթրոսյան	Նորայր - համայնքի ղեկավարի տեղակալ	216 000 դրամ
Մարգարյան	Անահիտ - համայնքի ղեկավարի օգնական	200 000 դրամ
Կարապետյան	Կորյուն - Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար	200 000 դրամ
Գևորգյան	Նորիկ - Զովք գյուղի վարչական ղեկավար	200 000 դրամ
Թադևոսյան	Սուսաննա - աշխատակազմի քարտուղար	240 000 դրամ
Հովհաննիսյան	Սոնա - բաժնի պետ	216 000 դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ վճարումն իրականացնել բյուջեի համապատասխան հոդվածից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 19
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հուլիսի 2021 թվականի N 517-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 178-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 31 և 50-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի թիվ 12-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ Կ-11052021-07-0086 որոշումը՝ գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Անդրեաս Սերգեյի Հարությունյանի կողմից Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական զանգվածի «Ա» տեղամասի 2-րդ թաղամասի թիվ 7 հասցեի հողակտորի հարևանությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող 941,8 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված օժանդակ շինության՝ 16,1 քառ.մետր, խորդանոցի՝ 28,4 քառ.մետր, ծածկերի՝ 42,5 քառ.մետր և 29,7 քառ.մետր, լողավազանի՝ 79,2 քառ.մետր, սանհանգույցի 9,4 քառ.մետր, պարսպի՝ 22,7 քառ.մետր և աստիճանների՝ 4,3 քառ.մետր, ընդհանուր արտաքին մակերեսներով (հիմք՝ անհատ ձեռնարկատեր Վահագն Սարգսյանի կողմից 2021 թվականի հունիսի 26-ին կազմված հողամասի և շինություններ հատակագծեր, ինքնակամ կառուցված շինությունների արտաքին մակերեսների մասին տեղեկանք) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական զանգվածի «Ա» տեղամասի 2-րդ թաղամասի թիվ 7 հասցեի հողակտորի հարևանությամբ գտնվող 941,8 քառ.մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Այգեգործական 2-րդ թաղամաս, թիվ 7/1:

2.Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 2-րդ թաղամասի թիվ 7/1 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 941,8 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորում ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը՝ 16,1 քառ.մետր, խորդանոցը՝ 28,4 քառ.մետր, ծածկերը՝ 42,5 քառ.մետր և 29,7 քառ.մետր, լողավազանը՝ 79,2 քառ.մետր, սանհանգույցը 9,4 քառ.մետր, պարսպը՝ 22,7 քառ.մետր և աստիճանները՝ 4,3 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսներով, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը (կցվում են հողամասի և շինությունների հատակագծերը):

3.Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական 2-րդ թաղամասի թիվ 7/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձին՝ Անդրեաս Սերգեյի Հարությունյանին:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 26-ի «Անշարժ գույքը որպես համայնքային սեփականություն ճանաչելու և ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» թիվ 178-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2021 թ. հուլիսի 16
գ. Ջրվեժ